



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Արմավիրի մարզի առաջին աստանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Ադամյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ն.Հովակիմյան
դատավորներ՝ Կ.Մարդանյան
Ռ.Մխիթարյան

2 մայիսի 2025 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ
դատարան),

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Գուրգեն Ազատի
Արշակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի
դեկտեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանի
վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2021 թվականի հունվարի 3-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, հարուցվել է թիվ 48100121 քրեական գործը:

2021 թվականի հունվարի 3-ին Գուրգեն Ազատի Արշակյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի հունվարի 5-ի որոշմամբ Գուրգեն Արշակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ու նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 6-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Արշակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Գ.Արշակյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2021 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի մայիսի 22-ի դատավճռով Գ.Արշակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, որին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածն ու նրան թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով: 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա, ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ու սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ դատախազի վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի մայիսի 22-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է վարույթի ելքի վրա, ու միաժամանակ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն:

Մասնավորապես, բողոք բերած անձը գտել է, որ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, ստորադաս դատարանը Վճռաբեկ դատարանի վերաբերելի նախադեպային իրավունքի լույսի ներքո պատշաճ իրավական վերլուծության չի ենթարկել մեղադրյալ Գ.Արշակյանի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության վրա ազդող ստորև նշված գործոնները: Այսպես. պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ մեղադրյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը խիստ բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա՝ նրա առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Վերոգրյալի հետ մեկտեղ, արարքը կատարվել է կտրող-ծակող գործիքի՝ դանակի գործադրմամբ: Ըստ բողոքի հեղինակի՝ ուշադրության է արժանի նաև հասցված վնասի բնույթն ու տեղակայումը:

Միաժամանակ, մեղադրյալի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանի հաշվի առնված

հանգամանքները, ըստ բողոքի հեղինակի՝ չեն կարող ողջամտորեն նվազեցնել մեղադրյալ Գ.Արշակյանի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանալ:

Արդյունքում բողոքի հեղինակը եզրահանգել է, որ սույն վարույթի փաստական հանգամանքների համակցությունը վկայում է առանց պատիժը փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու անհնարինության մասին:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ վերացնելով մեղադրյալ Գ.Արշակյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը:

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Գուրգեն Արշակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր է ճանաչվել այն արարքի համար, որ նա. *«(...) [Ի]ր մոտ գրնվող, և սառը զենք չհանդիսացող դանակով, դիրավորությամբ հարվածել և ծանր մարմնական վնասվածք է պատճառել Բ.Հազրոյանին, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.*

2021թ. հունվարի 3-ին՝ ժամը 15-ի սահմաններում, Բ.Հազրոյանին պարկանոց՝ Արմավիրի մարզի, Նալբանդյան գյուղի, 3-րդ թաղամասի, 4-րդ փողոցի 2-րդ հասցեում գրնվող փան դիմաց՝ փողոցում, կենցաղային հարցերի շուրջ, այն է՝ նշված փանն այլևս իրեն բնակվել չթույլատրելու հարցի հետ կապված, վիճաբանության մեջ է մտել հայր ու որդի Դավիթ և Խաչիկ Հազրոյանների հետ, որի ընթացքում իր բաճկոնի գրպանից հանելով սառը զենք չհանդիսացող, գործարանային արտադրության, ծալովի սևեռիչով դանակը, դիրավորությամբ մեկ անգամ դրանով հարվածել է Բ.Հազրոյանի որովայնի ձախ հարվածին պատճառելով «որովայնի առաջային պարի ծակած-կտրած թափանցող վերք», այդ

կերպ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող վրանգավորության հարկանիշով»¹:

8. Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալ Գ.Արշակյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Ու]սումնասիրելով ամբաստանյալի անձը բնութագրող փյույակները, պարասիանսարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, այն է՝ կատարած արարքի համար անկեղծորեն զղջալը, խոստովանական ցուցմունք փալը, փուժողի հետ հաշտվելը և վերջինիս կողմից բողոք չներկայացնելը և ծանրացնող հանգամանքները, որոնք բացակայում են սույն գործով, ամբաստանյալ Գ.Արշակյանի նկատմամբ նրա կատարած հանցագործության համար պարիժ նշանակելիս [Առաջին ատյանի] դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, այն, որ նա թեև նախկինում դատվել է, սակայն ներկայումս դատվածություն չունի, ֆիզիկապես վարատող է, 3-րդ խմբի հաշմանդամ է:

(...) [Հ]աշվի առնելով ամբաստանյալի կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, դրանք համադրելով նրա անձը բնութագրող փյույակների հետ և հաշվի առնելով նաև ամբաստանյալի պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքները և ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է նշանակել պարիժ ազատագրկման ձևով, սակայն պայմանականորեն չկիրառելով սահմանել փորձաշրջան»²:

9. Վերաքննիչ դատարանը, մեղադրյալ Գ.Արշակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելով, արձանագրել է հետևյալը. «(...) Գ.Արշակյանի նկատմամբ նշանակված պարիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս, [Առաջին ատյանի] դատարանը, վերլուծելով և գնահատելով գործի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 294-303:

² Տե՛ս նույն տեղում:

փաստական փյախները, հաշվի առնելով ամբաստանյալի անձը բնութագրող փյախները (դատվածություն չունի, փարիքը՝ 64 փարեկան է, առողջական վիճակը՝ 3-րդ խմբի հաշմանդամ, փարել է սրտամկանի ինֆարկտ, շագանակագեղձի աղեկոնմա ախտորոշմամբ գրնվում է ուռուղոգի հսկողության փակ), կատարած արարքի բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը (դիտավորությամբ կատարել է անձի առողջության դեմ ուղղված ծանր հանցագործություն), պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները (փվել է խոստովանական ցուցմունքներ, կատարածի համար զղջացել է), փուժողի հետ հաշտվել են, վերջինս հայրնել է, որ ամբաստանյալի նկատմամբ բողոք-պահանջ չունի, քաղաքացիական հայց չկա, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հետհանցավոր դրական վարքագիծը, հիմնավոր հետևության է հանգել այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը ռեալ կրելու:

Մարդասիրության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների պահպանման փեսանկյունից Գ.Արշակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու թույլատրելիության մասին [Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնավորված են: [Առաջին արյանի դատարանի համոզվածությունը բխում է գործի օբյեկտիվ փյախներից»³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

10. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Գ.Արշակյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. Վճռաբեկ դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 72-82:

օրենսգրքի կարգավորումների շրջանակներում անդրադարձել է մի շարք նախադեպային որոշումներում⁴: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պատիժ նշանակելու և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները շարունակում են վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառելի լինել նաև գործող քրեաիրավական կարգավորումների նկատմամբ⁵:

11.1 Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ դատարանի համոզվածությունը և վստահությունն այն մասին, որ մեղադրյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս նշել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլնի, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա⁶՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արևեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արևեն Գրիգորյանի* գործով 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ ԵԴ/0335/01/19, *Սարգիս Խաչատրյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14, *Նարեկ Խաչատրյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0191/01/14, *Արսեն Կարասպետյանի և Ռուբեն Գույգույանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԴԴ/0011/01/14, *Սերգեյ Աբովյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԴԴ/0038/01/15, *Անդրանիկ Ալավերդյանի* գործով 2021 թվականի հուլիսի 20-ի թիվ ԿԴ2/0026/01/19 որոշումները:

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Նարեկ Արամյանի և Անդրանիկ Ավագյանի* գործով 2025 թվականի մարտի 21-ի թիվ ԳԴ1/0036/01/23 որոշումը:

⁶ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն⁷:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դիտարկություններ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վրանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վրանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխարհայինության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխարհայինության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլություն կամ թունամոլություն հիվանդացում՝

պարժվում է ազատագրվածներ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Գ.Արշակյանը մեղավոր է ճանաչվել այն արարքի համար, որ նա, 2021 թվականի հունվարի 3-ին, տուժող Բ.Հազրոյանի տան դիմաց՝ փողոցում, վերջինի և նրա որդու հետ կենցաղային հարցի, այն է՝ նշված տանն այլևս իրեն բնակվել չթույլատրելու շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, գրպանից հանած ծալովի սևետիչով դանակով հարված է հասցրել Բ.Հազրոյանի որովայնի ձախ հատվածին՝ առողջությանը պատճառելով ծանր մարմնական վնասվածք, որն արտահայտվել է որովայնի առաջային պատի ծակած-կտրած թափանցող վերքի ձևով, որը վտանգավոր է կյանքի համար⁸,

- Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Գ.Արշակյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ընդգծել է, որ հաշվի է առնում կատարված արարքի հանրային

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամսոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, Վանյա Բեգյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, Մհեր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները:

⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

վտանգավորության բնույթն ու աստիճանը, նրա անձը բնութագրող փաստական տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները՝ մասնավորապես, ինքնախոստովանական ցուցմունք տալը, կատարած արարքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը և նրա կողմից բողոք չներկայացնելը, դատվածության բացակայությունը, վատառողջ՝ երրորդ խմբի հաշմանդամ լինելն ու պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ նշված հանգամանքներն իրենց համակցության մեջ բավարար հիմք են տալիս գալու հետևության, որ մեղադրյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու⁹,

- Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ վիճարկվող դատական ակտով արձանագրված հանգամանքները, ինչպես նաև՝ մեղադրյալի տարիքը (64 տարեկան է) առողջական վիճակը բնութագրող տվյալները, մասնավորապես՝ նախկինում սրտամկանի ինֆարկտ ունենալը, շագանակագեղձի աղէնոմա ախտորոշմամբ ուռուլոգի հսկողության տակ գտնվելը, հետհանցավոր դրական վարքագիծը, իրենց համակցության մեջ բավարար հիմքեր են տալիս գալու հետևության, որ մեղադրյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու¹⁰:

13. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից Գ.Արշակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրված՝ անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև սույն քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները ողջամտորեն չեն նվազեցնում մեղադրյալի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունն այն աստիճան, որ

⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

վերջինիս նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը համարվի իրավաչափ:

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Արշակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, ստորադաս դատարանները պատշաճ իրավական վերլուծության չեն ենթարկել ամբաստանյալի կողմից կատարած հանցավոր արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ, մասնավորապես.

ա) խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ Գ.Արշակյանի արարքը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը խիստ բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա՝ ***նրա առողջությանը պատճառելով կյանքի համար վրանգավոր ծանր վնաս,***

բ) հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ մեղադրյալը ***գործել է ուղղակի դիտավորությամբ, գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է ծանր վնաս, նախապես է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,***

գ) հանցագործության իրադրությունը, գործիքն ու եղանակը. տուժողի տան դիմաց, կենցաղային հարցի, այն է՝ տուժողին պատկանող տանն այլևս իրեն բնակվել չթույլատրելու շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, իր մոտ եղած ***կրրող-ծակող գործիքի՝ ծալովի սևեռիչով դանակի գործադրմամբ*** հարված հասցնելը,

դ) տուժողի առողջությանը հասցված վնասի բնույթն ու տեղակայումը, մասնավորապես այն, որ մեղադրյալը հարված է հասցրել տուժողի ***կենսական կարևոր օրգանի շրջանում՝ որովայնի ձախ հարվածին*** և առողջությանը պատճառել այնպիսի ***ծանր վնաս,*** որն արտահայտվել է որովայնի առաջային պատի ծակած-կտրած թափանցող վերքի ձևով, ***որը վրանգավոր է կյանքի համար:***

Ինչ վերաբերում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնված՝ մեղադրյալի առողջական վիճակը բնութագրող հանգամանքին, հարկ է ընդգծել, որ թեև մեղադրյալի առողջական վիճակի գնահատումն էական նշանակություն ունի

քրեախրավական ներգործության համաչափ միջոց ընտրելու հարցում¹¹, սակայն ստորադաս դատարանները սահմանափակվել են համապատասխան տեղեկատվության մատնանշմամբ՝ առանց վերլուծելու և գնահատելու ամբաստանյալի անազատության մեջ գտնվելու պայմաններում հնարավոր անհրաժեշտ բժշկական օգնությունը և սպասարկումը պատշաճ կազմակերպելու հնարավորությունը: Տվյալ դեպքում, որևէ հիմնավորում չի ներկայացվել և ներկայացված նյութերում առկա չէ որևէ փաստական հանգամանք, որը հիմք կտար եզրահանգելու, որ Գ.Արշակյանին անհրաժեշտ բուժօգնությունը չի կարող պատշաճ կազմակերպվել անազատության մեջ գտնվելու պայմաններում:

15. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Գ.Արշակյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցեին վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում, իսկ դրանք անտեսելը հանգեցրել է քրեադատավարական օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտերի կայացման:

16. Վճռաբեկ դատարանը բազմիցս կրկնել է, որ անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեախրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները պետք է հաշվի առնեն ինչպես խախտվող հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այնպես էլ արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ալեքսան Հակոբյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՇԳ/0025/01/16 որոշման 16-17-րդ կետերը:

կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը¹²:

Առանց վերը թվարկված համգամանքների գնահատման՝ առողջությանը դիտավորությանը ծանր վնաս պատճառելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին: Արդյունքում, նշանակված պատժով չի ապահովվի կատարած արարքի և կիրառված քրեաիրավական ներգործության միջոցի համաչափությունը, ինչպես նաև կլիաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները¹³:

17. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ստորադաս դատարանների կողմից վկայակոչված՝ մեղադրյալ Գ.Արշակյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին վկայող վերը շարադրված փաստական տվյալների առկայության պայմաններում, չեն կարող ողջամտորեն նվազեցնել Գ.Արշակյանի կատարած արարքի և նրա անձի հանրային վտանգավորությունն այն աստիճան, որ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանան:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Արշակյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, Գ.Արշակյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արևեն Գրիգորյանի* գործով 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ ԵԴ/0335/01/19 որոշման 12-րդ կետը, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Սարգիս Խաչատրյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14, *Նարեկ Խաչատրյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԴԴ/0191/01/14, *Արսեն Կարապետյանի և Ռուբեն Գուլգույանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԴԴ/0011/01/14, *Սերգեյ Արովյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԴԴ/0038/01/15 և *Ղևոնդ Հովհաննիսյանի* գործով 2025 թվականի ապրիլի 9-ի թիվ ԵԴ/0611/01/23 որոշումները:

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արևեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 15-17-րդ կետերը:

պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ են տվել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի խախտում: Արդյունքում, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածով նախատեսված նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Հետևաբար անհրաժեշտ է Գ.Արշակյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով ստորադաս դատարանների դատական ակտերը փոփոխել. նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը պետք է վերացնել և թողնել կրելու Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի մայիսի 22-ի դատավճռով նշանակված՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով ազատագրկումը՝ պատժի կրման սկիզբը հաշվելով նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գուրգեն Ազատի Արշակյանի վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի մայիսի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը փոփոխել:

2. Գուրգեն Ազատի Արշակյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ազատագրկման ձևով նշանակված պատիժը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը վերացնել և թողնել կրելու նրա նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի՝ 2023 թվականի մայիսի 22-ի դատավճռով նշանակված՝
3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով ազատազրկումը:

Պատժի կրման սկիզբը հաշվել Գուրգեն Ազատի Արշակյանին փաստացի
արգելանքի վերցնելու պահից:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել
անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ